ՆՈՐԱՅՐ ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆ, Մտորումներ և հուշեր ակադեմիկոս Աշոտ Հովհաննիսյանի մասին, *Ե., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2012, 79 էջ:*



Նորայր Սարուխանյանի «Մտորումներ և հուշեր ակադեմիկոս Աշոտ Հովհան-նիսյանի մասին» գրքույկն ունի պատմական սկզբնաղբյուրի արժեք: Լինելով մեծ գիտնականի ասպիրանտը և պատմության ինստիտուտի նոր պատմության բաժնի գիտական աշխատողը 1963-1970 թվականներին՝ հեղինակը սղագրել է Աշ. Հովհաննիսյանի բոլոր բանավոր ելույթների ուշագրավ դրվագները: Նա գիտնականի հետ հանդիպումները շարունակել է նաև «Սովետական Հայաստան» օրաթերթի խմբագրի տեղակալ աշխատելու առաջին մեկ և կես տարում, ամեն անգամ բաժանվելուց հետո թղթին հանձնել ուսուցչի արժանահիշատակ խոսքերը:

Ն. Սարուխանյանի գրքույկի գլխավոր առանձնահատկությունների մեջ ամենահատկանշականը ճշմարտախոսությունն է, որը, զուգորդվելով իրականության ընկալման՝ Աշ. Հովհաննիսյանի խոսքերի կուռ տրամաբանության հետ, ընթերցողի համար նյութը ընդհանուր առմամբ դարձնում է ուշագրավ: Մտորումներից և հուշերից հառնում է նշանավոր հայագետի կենդանի պատկերը: Գրքույկը գրված է Աշ. Հովհաննիսյանի նկատմամբ հեղինակի տածած սիրով ու ջերմությամբ:

«Մտորումների, խոհերի և հուշերի շրջանակներից դուրս գալու համար միայն պիտի ասեմ,- գրքույկի 13-րդ էջում գրում է հեղինակը,- որ 40 տարի առաջ, երբ իջավ նրա աշխարհիկ կյանքի վարագույրը, նրա հետ կապված ամեն մի դեպքը, նրա ամեն մի խոսքը արժեքավորվում է, նոր իմաստ է ստանում: Հարգված, սիրված մարդու, այն էլ Աշ. Հովհաննիսյանի նման վառ անհատականության կորստից հետո, աննշան թվացող ամեն մի իրողություն մի նոր երանգ է ավելացնում նրա հարուստ կենսագրությանը: Ինչպես իր ստեղծագործությունների մեջ, այնպես էլ անձնական կյանքում նա խոհուն էր, անկեղծ ու անմիջական: Անդիմադրելի հմայքի տեր էր: Թերևս բացառիկ են այն մարդիկ, որոնց կյանքն ու գործը այնքան ներդաշնակ լինեն, որքան Աշ. Հովհաննիսյանինը: Նրա համար կյանքը արարում էր, արարումը՝ կյանք: Նա իր ներկայությամբ ազնվություն էր պարտադրում»:

Գրքույկում ցույց է տրվում, որ Աշ. Հովհաննիսյանի ելույթները, զրույցները լսողներին տալիս էին քաղաքացիության հզորության զգացողություն, իրականությունը խորությամբ տեսնելու և զգալու ընդունակություն, անցյալի ավանդական արժեքները արդիական խնդիրներին ծառայեցնելու կամք ու կարողություն:

Հայաստանում խորհրդային իշխանության հաստատումից հետո նա եղել է հանրապետության լուսավորության ժողովրդական առաջին կոմիսարը: Այնուհետև, 1921-1927 թթ., աշխատել է որպես Հայաստանի կոմունիստական կուսակցության Կենտկոմի առաջին քարտուղար: Գրեթե վեց տարի զբաղեցնելով այդ պաշտոնը՝ նա վիթխարի

աշխատանք է կատարում հանրապետության ժողովրդական տնտեսության, գիտության ու մշակույթի զարգացման բնագավառում: Այդ ժամանակահատվածում նա ստեղծում է նաև իրեն հատուկ գիտահրապարակախոսական ասպարեզ:

Կենտկոմի առաջին քարտուղար աշխատած տարիներին նա «Նորք» հանդեսի խմբագիրն էր: Հանդեսի խմբագրական կազմում էին Ե. Չարենցը, Ա. Մռավյանը, Ա. Կարինյանը և Պ. Մակինցյանը: Անչափ կարևոր է, որ լինելով հանրապետության կառավարող կուսակցության առաջին դեմք՝ նա հանդեսի հեղինակներին ամենևին չէր պարտադրում գաղափարախոսական ու քաղաքական որևէ չափանիշ: Առանց տարակուսանքի կարելի է ասել, որ այդ հանդեսը խմբագրի շնորհիվ դարձել էր տվյալ ժամանակաշրջանի քաղաքական մտքի յուրահատուկ հանրագիտարան, որի էջերում տպագրվում էին Ե. Չարենցը, Դ. Անանունը, Լ. Քալանթարը, Թ. Ավդալբեկյանը, Կ. Զարյանը, Դ. Դեմիրճյանը, Ե. Շահազիզը, Ս. Զորյանը, Ս. Լիսիցյանը, Լեոն, Գ. Մահարին, Մ. Արմենը, Ա. Բակունցը և ուրիշներ: Համարձակորեն կարելի է ասել, որ Ա. Հովհաննիսյանը Հայաստա- նի կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղարի պաշտոնում աշխատել է անձնվեր, սակայն երբ կառավարության ղեկավար համակարգում տիրապետող դարձավ վարչահրամայական մեթոդը, որը բացահայտ խորթ էր նրա համար, 1927 թ. ազատվում է իր պաշտոնից ու տեղափոխվում է Լենինգրադ: Կարճ ժամանակ անց նա հրավիրվում է Մոսկվա և աշխատանքի է անցնում մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտում: Այնուհետև, 1931- 1934 թթ., աշխատում է որպես ԽՍՀՄ ազգությունների ինստիտուտի փոխտնօրեն, 1934-1935 թթ.՝ նյութական մշակույթի պատմության պետական ակադեմիայի բաժանմունքի տնօրեն: 1935-1937 թթ. նա ԽՍՀՄ պատմության ինստիտուտի փոխտնօրենն էր: Դա այդ ժամանակահատվածի վերջին աշխատանքն էր:

Դժբախտաբար, 1937 թ. անհիմն բռնադատվել է և բանտում է մնացել մինչև 1943 թ.: Արդարացվել է 1954 թ.:

Գրքի հեղինակը նշում է, որ Աշոտ Հովհաննիսյանը հայ պատմագիտության մեջ իր առաջին հայտը ներկայացնում է 1913 թ.՝ Մյունխենում՝ հրատարակելով «Իսրայել Օրին և հայ ազատագրական գաղափարը» աշխատությունը, որը պաշտպանում է որպես դոկտորական ատենախոսություն և ստանում փիլիսոփայության դոկտորի գիտական աստիճան: Գրեթե 20-ամյա ընդհատումից հետո պատմության հսկան հրապարակում է շուրջ 120 ուսումնասիրություն: Նրա ուսումնասիրությունները հիմնականում նվիրված են հայ ազատագրական մտքի, XIX դ. հայ հասարակական-քաղաքական հոսանքների, հայ-ռուսական հարաբերությունների պատմությանը: Նրա հիմնարար աշխատությունների մեջ կարևոր տեղ են գրավում «Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության», «Նալբանդյանը և նրա ժամանակը» երկհատորյակները և այլ գործեր:

Նորայր Մարուխանյանը, բնութագրելով Աշոտ Հովհաննիսյանի պատմագիտական հայացքները, ղեկավարվում է այն ճշմարտությամբ, որ լինելով բնատուր կարողությունների և հարուստ գիտելիքների տեր անհատականություն՝ նա հաճախ օգտագործում էր թևավոր խոսքեր, դարձվածքներ, ինչպես նաև նուրբ հումոր, որն ավելի ազդու էր դարձնում խոսքը: Նշենք դրանցից մի քանիսը.

- Մեծարել ազգային պատմության լուսավոր դրվագները, չի նշանակում քողարկել նրա անցյալի կամ ներկայի մռայլ էջերը:

- Գրել պարզ, չի նշանակում լինել պարզունակ:

- Մարդկության պատմությունը արժեքների վերաշինության պատմություն է:

- Ազատությունն առանց գաղափարների ծնում է անարխիա, իսկ ազատությունը հնարավոր է միայն այնտեղ, որտեղ իրավունքն իշխում է կրքերին:

- Ինտերնացիոնալիստ լինելու համար նախ և առաջ պետք է հայրենիք ունենալ:

- Քաղաքակիրթ մարդու առաջին արժանիքը սերն է դեպի հայրենիքը: Գողն ու ավազակը հայրենասեր չեն կարող լինել:

- Առաջադեմ գաղափարները ծնվում են, երբ աշխարհն զգում է դրանց կարիքը:

- Պատմաբանի գրելառճը նրա մտքի հագուստն է:

- Նիկոլայ Առաջինը ցույց տվեց, որ բռնակալ է դառնում նա, ով չի կարողանում կառավարել:

- Եթե դժվար կամ դյուրին չէ ասել ճշմարտությունը, ապա դրանից չի հետևում, թե պետք է ստել:

Աշ. Հովհաննիսյանը բարի էր բոլոր մարդկանց նկատմամբ, ատում էր շողոքորթներին ու չարակամներին:

Երբեք որևէ մեկի նկատմամբ հիշաչարություն չէր դրսևորում, թեև առիթներն անպակաս էին և բարկացողները՝ ոչ սակավ: Բանավիճելիս նա հարցը ձանձրալի պատմություն չէր դարձնում, այլ իր դավանած սկզբունքները այնպես էր ներկայացնում, որ ընդդիմադիր կարծիք ունեցողն անգամ լցվում էր խորին հարգանքով:

Գրքի հեղինակը վերջում այն հետևությունն է անում, որ Աշոտ Հովհաննիսյանը քայլող պատմություն էր, Հայաստանի պատմության գահավիժումների ու թռիչքների, ողբերգությունների ու հանդիսությունների հմուտ գիտակը, դպիրն ու վկան: Աշոտ Հովհաննիսյանի ստեղծած մտավոր արժեքների հարատևության մեջ է նրա անմահությունը:

ՍՏԵՓԱՆՅԱՆ Ս. Ս.
Պատմական գիտությունների դոկտոր